Պարույր Սևակ

Պատկերացնում եմ

Պատկերացնում եմ նորի՛ց ու նորի՛ց.
Ինչ-որ տեղ մի օր ծնվում է մորից
Շա՜տ սովորական
Մանուկ մի լալկան:
Ինչ որ ես գիտեմ՝ նա դեռ չգիտի,
Իր դասագրքից իմանա պիտի.
Ինչ որ եղել է ինձ համար հանգույց,
Որ պիտի քանդել կամ թրով հատել,
Նա գիտի՛ արդեն
Եվ գիտի - մանկո՜ւց.
Ինչի վրա ես գլուխ եմ ջարդել
Եվ տառապելով տառապել սաստիկ,
Նա ստացել է արդեն... պատրաստի՜.
Ինչ ես ատել եմ, ինչ ես ատում եմ՝
Նա նույնիսկ իր շուրջ չի նկատո՛ւմ էլ.
Ինչ չեն ներել ինձ՝ նրան ներում են,
Ինչ ես եմ սիրել՝ դրան տիրում է.
Ինչին ձգտել եմ, ինչ երազել եմ՝
Նա դրան արդեն վաղո՜ւց հասել է,-
Եվ չի՛ հասկանում իմ տենչանքը նա,
Եվ չի՛ հասկանում իմ տանջանքը նա...

Ինչ ես եմ կրել՝
Նա էլ չի՛ կրի,
Ինչ ես չեմ գրել՝
Նա՛ պիտի գրի...
Սակայն նա գոնե պատկերացնո՞ւմ է
Կյա՛նքը,
Տանջա՛նքը,
Ջա՛նքը պապերի...

25.V.1957թ.
Մոսկվա